ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 35

«22» 08 2019թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետ Վահագն Ժուլվերի Մուրադյանին Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու և Արսեն Ռուբիկի Մարտիրոսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 29.08.2018թ. N 286-Ա և 21.08.2019թ. N 159-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Կատարել Վ.Մուրադյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Մարտիրոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Ասլանյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Պողոսյան Վահագն - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ |

| | |
|---|---|
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Սմբատյան Ռոման - | Հայաստանի Հանրապետության դատախազության քարտուղարության պետ |
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության քարտուղարության արխիվի բաժնի պետ |
| Գևորգյան Թամարա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար |
| Գևորգյան Նարեկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության քարտուղարության ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 2-ը:

Ա. ԴԱՎԹՅԱՆ